ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 21-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի ԹԻՎ 15-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում (խմբերում) ընտանիքում բռնություն գործադրած անձանց կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը հաստատելու մասին» 15-Լ հրամանի՝

1) հավելված 1-ի 6-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«6. Իրավասու ծառայողը Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի հուլիսի 17-ի թիվ 18-Լ հրամանով նախատեսված գործողությունները կատարելու ընթացքում բռնություն գործադրած անձի անվամբ զենք հաշվառված լինելու փաստը հայտնաբերելու արդյունքում «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության

վերականգնման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետի կիրառման դեպքում բռնություն գործադրած անձից վերցնում է այդ պահին նրա փաստացի տիրապետման տակ գտնվող զենքը և ստացականով հանձնում հերթապահ մաս: Եթե զենքը գտնվում է բռնության կատարման փաստը հայտնաբերած ստորաբաժանման սպասարկման տարածքում, անկախ որոշման մասին այլ տարածքային ստորաբաժանմանը իրազեկելուց, զենք վերցնելու պարտականությունը կրում է բռնության փաստը հայտնաբերած ստորաբաժանումը: Եթե զենքը չի գտնվում բռնության կատարման փաստը հայտնաբերած ստորաբաժանման սպասարկման տարածքում, ապա այդ ստորաբաժանումն է կրում զենքը վերցնելու պարտականությունը՝ մինչև զենքի փաստացի գտնվելու վայրի ստորաբաժանմանը, իսկ փաստացի գտնվելու վայրը հայտնի չլինելու դեպքում՝ զենքի հաշվառման հասցեի սպասարկումը իրականացնող տարածքային ստորաբաժանմանը հայտնելը:»:

2) հավելված 1-ի 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6.1, 6.2, 6.3, 6.4, 6.5, 6.6 կետեր՝

«6.1. Եթե բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքը հաշվառված է ոստիկանության այլ ստորաբաժանման կողմից և տվյալ պահին չի գտնվում բռնություն գործադրած անձի փաստացի տիրապետման տակ, ապա.

ա)Նախազգուշացում կիրառելու մասին որոշում կայացնելու դեպքում՝ որոշումը կայացրած տարածքային ստորաբաժանումը անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում հեռախոսագրով (անհնարինության դեպքում՝ հերթապահ մասի հեռախոսային կապով) տեղյակ է պահում զենքի հաշվառումն իրականացնող ստորաբաժանմանը, որը միջոցներ է ձեռնարկում զենքի փաստացի գտնվելու վայրը պարզելու, ինչպես նաև պահման պայմանները ստուգելու համար և արդյունքների մասին հայտնում որոշումը կայացրած ստորաբաժանմանը,

բ) Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետը կիրառելու դեպքում՝ անհետաձգելի միջամտություն կիրառելու մասին որոշումը կայացրած տարածքային ստորաբաժանումը անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում հեռախոսագրով (անհնարինության դեպքում՝ հերթապահ մասի հեռախոսային կապով) տեղյակ է պահում զենքի փաստացի գտնվելու վայրը սպասարկող և հաշվառումն իրականացնող ստորաբաժանումներին: Զենքի փաստացի գտնվելու հասցեն սպասարկող տարածքային ստորաբաժանման իրավասու ծառայողը բռնություն գործադրած անձից վերցնում է զենքը և ստացականով ի պահ հանձնում հերթապահ մաս, այնուհետև զենքը վերցնելու մասին հեռախոսագրով հայտնում է որոշումը կայացրած ստորաբաժանմանը:

6.2. Բռնություն գործադրած անձի նկատմամբ նախազգուշացում կամ անհետաձգելի միջամտություն կիրառելու մասին որոշում կայացնելուց հետո, իրավասու ծառայողը անհապաղ, բայց ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում, բնակվելու փաստը պարզելու նպատակով, գրավոր (անհրաժեշտության դեպքում՝ ֆաքսիմիլային կապով) հարցում

է կատարում անձի փաստացի բնակության վայրի ոստիկանության տարածքային մարմին: Հարցումը ստանալուց հետո, 2 աշխատանքային օրվա ընթացքում, անձի փաստացի բնակության վայրի ոստիկանության ստորաբաժանումը պատասխանն ուղարկում է հարցումը կատարողին: Իրավասու ծառայողը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի հուլիսի 17-ի «Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը հաստատելու մասին» 14-Լ հրամանի հավելվածի 5-րդ կետով սահմանված գործողությունները կատարելուց և հարցման պատասխանը ստանալուց հետո, նախապատրաստած բոլոր նյութերը ուղարկում է բռնություն գործադրած անձի փաստացի բնակության վայրի ոստիկանության տարածքային ստորաբաժանում:

6.3. Բռնություն գործադրած անձի կանխարգելիչ հաշվառումն իրականացվում է հաշվառվող անձի փաստացի բնակության վայրի ոստիկանության բաժնի կողմից: Եթե բռնություն գործադրած անձը չունի հաշվառում և բնակության վայր կամ հայտնի չէ բնակության վայրը, հաշվառման է վերցվում արարքի կատարման վայրը սպասարկող տարածքային ստորաբաժանման կողմից:

6.4. Հաշվառման վերցնելու համար ոստիկանության իրավասու ծառայողը, անձի հաշվառված լինելու հանգամանքը ստուգելու նպատակով, բռնության փաստի հայտնաբերումից, ինչպես նաև անձի դատվածության փաստը հավաստող տեղեկատվություն ստանալուց հետո, 1 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հարցում է կատարում վարչությանը: Ընտանիքում բռնություն գործադրած անձի հաշվառված չլինելու դեպքում, կանխարգելիչ հաշվառման քարտ կազմելու վերաբերյալ զեկուցագիրը, հաշվառման վերցնելու համար հիմք հանդիսացած փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է բաժնի պետին:

6.5. Իրավասու ծառայողը բաժնի պետին ներկայացված զեկուցագրում նշում է կատարում բռնություն գործադրած անձի անվամբ զենք հաշվառված լինելու կամ չլինելու փաստի մասին և հաշվառման վերցնելու համար հիմք հանդիսացած փաստաթղթերում ներառում է նաև թույլտվության համակարգի հաշվառումներով ստուգված լինելու փաստը հավաստող փաստաթուղթը, իսկ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետը կիրառելու դեպքում՝ զենքը հերթապահ մաս ի պահ հանձնված լինելու փաստը հավաստող փաստաթուղթը: Բաժնի պետը «Զենքի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «ե» ենթակետի և ՀՀ ոստիկանության պետի տեղակալի 17.02.2016թ. «Քաղաքացիներին տրվող զենքի լիցենզիաների և թույլտվությունների ձևակերպման առանձնահատկությունների մասին» թիվ 2-Ց ցուցումի պահանջների կատարումն ապահովելու նպատակով հանձնարարական է տալիս բաժնի պետի ծառայության գծով տեղակալին: Իսկ եթե բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքի հաշվառումը վարվում է այլ ստորաբաժանման կողմից, իրավասու ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, գրավոր (անհրաժեշտության դեպքում՝ հեռախոսագրով) անձին հաշվառման վերցնելու մասին

հայտնում է զենքի հաշվառումը վարող ստորաբաժանմանը՝ «Զենքի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «ե» ենթակետի և ՀՀ ոստիկանության պետի տեղակալի 17.02.2016թ. «Քաղաքացիներին տրվող զենքի լիցենզիաների և թույլտվությունների ձևակերպման առանձնահատկությունների մասին» թիվ 2-Ց ցուցումի պահանջները կատարելու համար:

6.6. Ոստիկանության իրավասու ծառայողը, ընտանիքում բռնություն գործադրած անձի վերաբերյալ կանխարգելիչ հաշվառման քարտը (հավելված 6) գրանցում է ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշվառման մատյանում (այսուհետ՝ մատյան)՝ դրան տալով հերթական համար: Հաշվառման քարտերի հերթական համարները յուրաքանչյուր տարի սկսվում է 01 թվից, այնուհետև դրվում է գծիկ և նշվում հաշվառման տարեթվի վերջին երկու նիշերը: Հաշվառման քարտի համարը պետք է համընկնի մատյանում ընթացիկ տարվա հերթական համարի հետ:»,

3) հավելված 1-ի 12-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«12. Հաշվառված անձի փաստացի բնակության վայրի փոփոխության կամ բնակության վայրը պարզելու դեպքում մասնագիտացված ստորաբաժանման իրավասու ծառայողն այդ մասին տեղեկությունը ստանալուց հետո անհապաղ գրավոր տեղյակ է պահում վերջինիս բնակության հասցեն սպասարկող ոստիկանության տարածքային մարմին, որտեղից 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հավաստում ստանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում, կանխարգելիչ հաշվառման քարտը ուղարկվում է բնակության վայրի ոստիկանության բաժին:»,

4) հավելված 1-ի 23-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«23. Ոստիկանության իրավասու ծառայողը սոցիալական աշխատողի հետ փոխհամագործակցության շրջանակներում, ամսական առնվազն մեկ հանդիպում է ունենում հաշվառման վերցված և ընտանիքում բռնության ենթարկված անձանց հետ, իրականացնում բացատրական աշխատանքներ, ինչպես նաև ծանոթանում ընտանիքում տիրող իրավիճակին և ընտանիքի անդամների փոխհարաբերություններին և կազմում համապատասխան տեղեկանք: Եթե բռնության ենթարկված անձը փաստացի բնակվում է այլ տարածքում և հնարավոր չէ իրականացնել նախատեսվող հանդիպումները, ապա ստացված գրության հիման վրա հանդիպումներն իրականացնում է փաստացի բնակության վայրի ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման իրավասու ծառայողը և այդ մասին ամսական պարբերականությամբ գրավոր հայտնում բռնություն գործադրած անձի հաշվառումն իրականացնող ստորաբաժանմանը:»,

5) հավելված 1-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«4. կազմված զեկուցագրերը, ընթացիկ աշխատանքների մասին տեղեկանքները, աշխատանքների կատարման ընթացքում հաշվառվողի և այլ անձանց հետ անցկացված լսումների արձանագրությունները»:

2. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Վ. ՂԱՋԱՐՅԱՆ**

«29»___06_____2022թ.

ք. Երևան